

Պ-328-01.07.2022,06.09.2022-ԳԿ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1.

«Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4. Հեռարձակողները, որոնք եթեր են հեռարձակում նաև մանկական, կամ լրատվական տեսալսողական հաղորդումներ և ֆիլմեր, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողության խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության մատչելիությունը՝ օրվա ընթացքում համապատասխանաբար առնվազն մեկական մանկական հաղորդում ներկայացնելով հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ, և լրատվական տեսալսողական հաղորդում և ֆիլմ՝ ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով՝ կարգավորող պետական մարմնի սահմանած ժամերին և տեխնիկական նվազույն պահանջներին համապատասխան:»:

Հոդված 2.

Օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «7. Արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնց միջոցով տարածվում է ազգային, ռասայական, սեռային, կրոնական, տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն կամ պարունակում են նման նպատակ հետապնդող տեղեկատվություն:»:

Հոդված 3.

Օրենքի 22-րդ հոդվածի

1. 6-րդ մասի 3-րդ կետի գ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «գ. սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնք ուղղված են ազգային, ռասայական, կրոնական, սեռային, տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն պարունակող կարծրատիպերի հաղթահարմանը:»:
2. 6-րդ մասը լրացնել 4-րդ կետով հետևյալ բովանդակությամբ. «4) ապահովել հայերեն ենթագրերով կամ ժեստերի լեզվի թարգմանությամբ՝

- ա. շաբաթվա ընթացքում առնվազն մեկական կրթական, առողջապահական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդման հեռարձակում,
- բ. Հայաստանի Հանրապետության տոներին և հիշատակի օրերին կազմակերպվող միջոցառումների ուղիղ եթերով հեռարձակումները,
- գ. վարչապետի, Ազգային ժողովի նախագահի, Հանրապետության նախագահի, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղիղ եթերով հեռարձակվող ելույթները, ուղերձները և նախապես ծրագրված հարցազրույցները,
- դ. արտակարգ և ռազմական դրության ռեժիմի ընթացքում եթեր հեռարձակվող հատուկ թողարկումները,
- ե. սոցիալական գովազդը»:

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ին:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Տեսալսողական մեդիայի» մասին օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու և կից օրենքների նախագծերի վերաբերյալ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է լսողության խնդիրներ ունեցող անձանց մատչելի տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացման իրավական հիմքերի ստեղծման անհրաժեշտությամբ, բխում է ՀՀ Սահմանադրությունից, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքից և միջազգային պայմանագրերով ստանձնած երկրի պարտավորություններից:

Հասարակական կյանքում անձի լիարժեք ներառման համար, ի թիվս այլնի, առաջնային նշանակություն ունի սեփական իրավունքների և ազատությունների վերաբերյալ իրազեկման ապահովումը, որը նպաստում է ինքնուրույն որոշումների կայացմանն ու այդ իրավունքներից և ազատություններից անարգել օգտվելու հնարավորությանը: Որպես նշվածի իրացման հնարավորություն՝ հիմնարար նշանակություն ունի տեղեկատվության մատչելիության ապահովումը, ինչի բացակայությունն առկա օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայում մի շարք խոչընդոտներ է ստեղծում հաշմանդամություն ունեցող անձանց, հատկապես լսողության խնդիր ունեցող անձանց համար:

2010 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան, որի 21-րդ հոդվածով ամրագրվում է, որ մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան իրականացնել իրենց խոսքի ու կարծիքի ազատության իրավունքը, ինչպես նաև փնտրել, ստանալ և տարածել տեղեկություններ ու գաղափարներ մյուսների հետ հավասար հիմունքներով և հաղորդակցության իրենց նախընտրած բոլոր միջոցներով: Ընդ որում, նշված իրավունքների իրականացումն անհրաժեշտ է ապահովել առանց հավելյալ ծախսերի հաշմանդամություն ունեցող անձանց համար: Նշվածի առնչությամբ կոնվենցիոն կարգավորումներից բացի ՀՀ ներպետական օրենսդրությունը ևս որոշակի կարգավորումներ է նախատեսում: Մասնավորապես՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը սահմանում է, որ պետությունը հայերեն ժեստերի լեզուն ընդունում է որպես հաղորդակցման, ուսուցման և թարգմանչական ծառայությունների տրամադրման միջոց, ինչպես նաև տեսալսողական մեդիածառայություն մատուցողները պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողության խնդիրներ ունեցող անձանց համար հնարավոր տեղեկությունների ստացման մատչելիությունը: Լսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկություն ստանալու մատչելիությունն ապահովելու համար «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սահմանվում են օրվա ընթացքում հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ և (կամ) հայերեն բաց կամ փակ ենթագրերով

(համաժամանակյա գրավոր նկարագրությամբ) տեսալսողական հաղորդումների նվազագույն քանակը և պահանջները:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է՝ «Հեռարձակողները, որոնք արտադրում են նաև մանկական և (կամ) լրատվական տեսալսողական հաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության ընկալման մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ կարգավորող պետական մարմնի սահմանած ժամերին, համապատասխանաբար առնվազն մեկական մանկական և լրատվական տեսալսողական հաղորդում ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով»:

Խնդրահարույց է սակայն ժեստերի լեզվով հեռարձակման կազմակերպումը, քանի որ թարգմանության ընթացքում չեն պահպանվում միջազգայնորեն ընդունված տեխնիկական չափանիշները և պահանջները: Բացի այդ, մանկական հաղորդումների պարագայում օրենքը չի առանձնացնում դրանք մուլտֆիլմերից. արդյունքում հեռարձակողները մուլտֆիլմերը ենթագրերով են եթեր հեռարձակում, ինչը չի ապահովում երեխաների տեղեկություն ստանալու, կրթական և զարգացման ծրագրերին հաղորդակից լինելու իրավունքը, քանի որ վերջիններիս համար ոչ միայն դժվար է ընթերցել ենթագրերը, այլ նաև անհնարին, քանի որ մուլտֆիլմեր դիտող երեխաների մեծ մասը նախադպրոցական տարիքի է, հետևաբար կարդալ չգիտի:

Լսողության խնդիր ունեցող հեռուստադիտողները զրկված են պաշտոնական ուղիղ եթերներից և հարցազրույցներից տեղեկություն ստանալու հնարավորությունից, մասնավորապես վարչապետի, ԱԺ նախագահի, Հանրապետության նախագահի ուղիղ եթերով հեռարձակվող ելույթները, ուղերձները չեն ուղեկցվում ժեստերի լեզվի թարգմանությամբ: Լսողության խնդիր ունեցող անձանց իրավունքների իրացման համար չկան պայմաններ Արտակարգ կամ ռազմական դրության ռեժիմի ընթացքում արագ և մատչելի տեղեկություն ստանալու համար:

Հեռուստաեթերով հեռարձակվող սոցիալական գովազդը ժեստերի լեզվով կամ ենթագրերով հեռարձակվում է միայն պատվիրատուի նախաձեռնությամբ, ինչը կրկին սահմանափակում է տեղեկատվության մատչելիությունը:

Լսողության խնդիր ունեցող հեռուստադիտողները չունեն կրթական, առողջապահական, մշակութային, ժամանցային բնույթի հեռուստածրագրերին հաղորդակից լինելու, այդ թվում ֆիլմեր դիտելու հնարավորություն:

Բացի վերը նշվածից, թեև գործող կարգավորումներով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքն անդրադառնում է խտրականության արգելքին, այնուամենայնիվ, տեսալսողական հաղորդումների չարաշահման արգելքը չի սահմանում տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականության արգելք:

2020 թվականի օգոստոսի 7-ին ուժը կորցրած է ճանաչվել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը, որի 3-րդ հոդվածով սահմանվում էր «սուրդոթարգմանություն՝ հեռուստահաղորդման համաժամանակյա

թարգմանությունը ձեռք-լեզվով»: Սակայն 2020 թվականի հուլիսի 16-ին ընդունված «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքը չի ներառում համարժեք սահմանում: Այսպիսով՝ ժեստերի լեզվի հասկացությունը որևէ օրենքով սահմանված չէ:

1. Առաջարկվող կարգավորման բնույթը

Առաջարկվող իրավական ակտով նախատեսվում է փոփոխություններ և լրացումներ կատարել «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքում և կից օրենքների փաթեթում, մասնավորապես՝

- հստակեցնել հայերեն ժեստերի լեզվով և ենթագրերով հեռարձակվող հաղորդումների տեսակները և ավելացնել դրանց ծավալը,
- հստակեցնել կարգավորող պետական մարմնի լիազորությունները հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ տեսալսողական տեղեկատվության ներկայացման նվազագույն տեխնիկական պահանջների վերաբերյալ,
- սահմանել տեսալսողական հաղորդումների չարաշահման արգելք նաև տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն տարածելու, կամ նման նպատակ հետապնդող տեղեկատվություն պարունակելու դեպքում,
- հայերեն ենթագրերով և ժեստերի լեզվի թարգմանությամբ լրացուցիչ և պարտադիր հաղորդումների ցանկ սահմանել Հանրային հեռարձակողների համար, ներառելով կրթական, առողջապահական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումները, պաշտոնական տեղեկատվությունը, արտակարգ և ռազմական դրության ժամանակ հատուկ թողարկումները և սոցիալական գովազդը,
- «Լեզվի մասին» ՀՀ օրենքում սահմանել «Ժեստերի լեզու» հասկացությունը,
- իրավական հիմքեր ստեղծել Ազգային ժողովի հատուկ նիստերի, հայտարարությունների ժամերի և խորհրդարանական լսումների առցանց հեռարձակումը Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքով հայերեն ժեստերի լեզվի թարգմանությամբ կազմակերպելու համար:

2. Ակնկալվող արդյունքը

Օրենքի ընդունման արդյունքում կստեղծվեն իրավական հիմքեր՝ ընդլայնելու հայերեն ժեստերի լեզվով և ենթագրերով հեռարձակվող տեսալսողական հաղորդումների ծավալը, լրացուցիչ պարտավորություններ կսահմանվեն Հանրային հեռարձակողների համար, օրենքով կսահմանվի «Ժեստերի լեզու» հասկացությունը, իրավական հիմքեր կստեղծվեն Ազգային ժողովի հատուկ նիստերի և խորհրդարանական լսումների առցանց հեռարձակումը Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքով հայերեն ժեստերի լեզվի թարգմանությամբ կազմակերպելու համար:

ՏԵՂԵԿԱՆՔ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ **ԼՐԱՑՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ** ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի **Հայաստանի Հանրապետության** հուլիսի 16-ի N ՀՕ-395-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի

- 4-րդ մասը **շարադրել վերաշարադրել** հետևյալ **շարադասությամբ խմբագրությամբ**. «4. Հեռարձակողները, որոնք եթեր են հեռարձակում արտադրում են նաև մանկական, ~~և~~ (կամ) լրատվական տեսալսողական հաղորդումներ և ֆիլմեր, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողության ~~և~~ խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության ~~ընկալման~~ մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ ~~կարգավորող պետական մարմնի սահմանած ժամերին,~~ համապատասխանաբար առնվազն մեկական մանկական հաղորդում ներկայացնելով հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ, և լրատվական տեսալսողական հաղորդում և ֆիլմ՝ ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով՝ կարգավորող պետական մարմնի սահմանած ժամերին և տեխնիկական նվազույն պահանջներին համապատասխան:»:
- 4-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ **շարադասությամբ**. «ժեստերի լեզվով թարգմանությամբ տեսալսողական տեղեկատվության ներկայացման նվազագույն տեխնիկական պահանջները եւ հեռարձակման ժամերը:»:

Հոդված 2.

Օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասը **շարադրել հետևյալ նախադասությամբ խմբագրությամբ**. «7. Արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնց **միջոցով տարածվում է հետապնդում են** ազգային, ռասայական, սեռային, ~~և~~ կրոնական, տարիքային, **հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ** հատկանիշներով խտրականություն ~~քարոզելու նպատակ~~ կամ պարունակում են նման նպատակ հետապնդող տեղեկատվություն:»:

Հոդված 3.

Օրենքի 22-րդ հոդվածի

1. 6-րդ մասի 3-րդ կետի գ. ենթակետը շարադրել հետևյալ ~~խմբագրությամբ նախադասությամբ~~. «գ. սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնք ուղղված են ազգային, ռասայական, կրոնական, ~~և~~ սեռային, տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն պարունակող կարծրատիպերի հաղթահարմանը»:
2. 6-րդ մասը լրացնել 4-րդ կետով հետևյալ բովանդակությամբ. ~~նոր կետով հետևյալ բովանդակությամբ.՝ 4) ապահովել հայերեն ենթագրերով և (կամ) ժեստերի լեզվի թարգմանությամբ՝~~

ա. շաբաթվա ընթացքում առնվազն մեկական կրթական, առողջապահական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդման հեռարձակում,

բ. Հայաստանի Հանրապետության տոներին և հիշատակի օրերին կազմակերպվող միջոցառումների ուղիղ եթերով հեռարձակումները,

գ. վարչապետի, ԱԺ Ազգային ժողովի նախագահի, Հանրապետության նախագահի, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղիղ եթերով հեռարձակվող ելույթները, ուղերձները և նախապես ծրագրված հարցազրույցները,

դ. արտակարգ և ռազմական դրության ռեժիմի ընթացքում եթեր հեռարձակվող հատուկ թողարկումները,

ե. սոցիալական գովազդը»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ին:

~~2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի գ եւ դ կետերը ուժի մեջ են մտնում 2022 թվականի _____ դեկտեմբերի _____ 1-ին:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Տեսալսողական մեդիայի» մասին օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին»

(Պ-328-01.07.2022,06.09.2022-ԳԿ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| N° | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|----|---|--|--|--|---|
| 1. | ՀՀ կառավարություն | Նախագծի 1-ին հոդված | Նախագծի 1-ին հոդվածում «2020 թվականի» բառերից առաջ անհրաժեշտ է հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների: | Առաջարկն ընդունվել է, հոդվածը խմբագրվել է: | Ընդունվել է |
| 2. | ՀՀ կառավարություն | Նախագծի 2-րդ հոդված | Նախագծի 2-րդ հոդվածում «նախադասությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբ» բառով: Հիշյալ դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի | Առաջարկն ընդունվել է, հոդվածը խմբագրվել է: | Ընդունվել է |

| | | | | | |
|----|-------------------|----------------------------|---|--|-------------|
| | | | պահանջներից: | | |
| 3. | ՀՀ կառավարություն | Նախագծի 3-րդ հոդված | Նախագծի 3-րդ հոդվածում «նախադասությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբ» բառով: Հիշյալ դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջներից: | Առաջարկն ընդունվել է, հոդվածը խմբագրվել է: | Ընդունվել է |
| 4. | ՀՀ կառավարություն | Նախագծի 3-րդ հոդված | Նախագծի 3-րդ հոդվածում անհրաժեշտ է վերանայել հոդվածի մասերի և կետերի համարակալումը: Հիշյալ դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջներից: | Առաջարկն ընդունվել է, հոդվածը խմբագրվել է: | Ընդունվել է |
| 5. | ՀՀ կառավարություն | Նախագծի 3-րդ հոդված | Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում «նոր կետով հետևյալ նախադասությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «4-րդ կետով հետևյալ բովանդակությամբ» բառերով: | Առաջարկն ընդունվել է, հոդվածը խմբագրվել է: | Ընդունվել է |